



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

[Signature]
« 08 » 12 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0184 - 22

Ձեռնարկողը՝

«ԱՄՈՒՐ ԲԱԶԱՆՏ» ՍՊԸ

Սյունիքի մարզ, գ. Սպանդարյան, 4-րդ փողոց, տուն 21

Գործունեությունը՝

Սյունիքի մարզի «Քարաժայռ» անդեզիտաբազալտների
երևակման տեղամասում երկրաբանական
ուսումնասիրության աշխատանքների շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման
հայտ

Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝



Խաչիկ Մարտիրոսյան

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

թիվ ԲՓ **0184 - 22**
<08> 12 2022թ.

**Սյունիքի մարզի «Քարաժայռ» անդեզիտաբազալիտների երևակման
տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայր**

Ձեռնարկող՝	«ԱՄՈՒՐ ԲԱԶԱԼՏ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Հայտ/, Ծրագիր
Գործունեության տեսակը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Սյունիքի մարզ, Գորայք համայնք, գ. Սպանդարյան

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 2)-րդ կետի ա. ենթակետի՝ «երկրաբանական ուսումնասիրություններ» վերը նշված նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի:

Ներածական մաս. «ԱՄՈՒՐ ԲԱԶԱԼՏ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող անդեզիտաբազալիտների «Քարաժայռ» երևակումը գտնվում է Զանգեզուրի լեռնաշղթայի և Սյունյաց սարահարթի միացման հատվածում, Որոտան գետի ձախ ափին: Այն բնութագրվում է բլրային ռելիեֆով՝ բացարձակ նիշերը տատանվում են 1900մ-2400մ սահմաններում, զբաղեցնում է մոտ 1.6հա տարածք: Երևակման տարածքից մոտ 1.18կմ հեռավորության վրա անցնում է Մ-2 միջպետական նշանակության ավտոճանապարհը: Սիսիան քաղաքի հետ հայցվող տարածքը կապված է 10-12կմ երկարությամբ ասֆալտապատ ճանապարհով: Երևակումը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Գորայք համայնքի Սպանդարյան բնակավայրի վարչական սահմաններում՝ բնակավայրից 1.5կմ դեպի հարավ ուղղությամբ: Հայցվող տարածքի հողամասի մի հատված հանդիսանում է վարելահող և սեփականության իրավունքով պատկանում է ընկերությանը, իսկ մյուս մասը՝ համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական այլ հողատեսքի է:

Նկարագրական մաս. Հայցվող տարածքը բնութագրվում է հետևյալ կոորդինատներով (ARM WGS-84 կոորդինային համակարգով).

- | | |
|-------------------------------|-------------------------------|
| 1. 4386647.0000, 8577971.5000 | 4. 4386594.8000, 8578142.2000 |
| 2. 4386695.9000, 8578206.2000 | 5. 4386592.8000, 8578120.5000 |
| 3. 4386678.3000, 8578228.3000 | 6. 4386583.1000, 8578031.7000 |

Դիտարկվող տարածքում ստորերկրյա ջրային հորիզոնները և անոթաբանական բացակայում են, ինչը պայմանավորված է տարածքը կազմող հրաբխային ծագման



ապարների ֆիզիկա-մեխանիկական հատկություններով և բարձր ծակոտկենությամբ: Տարածաշրջանի հիմնական ջրային զարկերակը սահմանային Որոտան գետն է, որի հունը երևակման տարածքից ընկած է մոտ 750մ ռելիեֆով ներքև:

Երևակման տարածքի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ստորին չորրորդականի հասակի անդեզիտաբազալտները և անդեզիտները, ինչպես նաև ժամանակակից ալյուվիալ-դելյուվիալ առաջացումները: Տարածքում մակաբացման ապարների հզորությունը միջինը կազմում է 3մ, որից հողաբուսական շերտը՝ 0.6մ է: Հայցվող տարածքն արևելյան կողմից սահմանակցում է նախկինում շահագործված՝ 0.7 հա մակերեսով տեղամասի հետ, որտեղ առկա են բացահանք և լցակույտ: Տեղանքի ռելիեֆով և արդյունահանման աշխատանքների համար բարենպաստ լեռնատեխնիկական պայմաններով պայմանավորված՝ որպես հետախուզման հորիզոն է ընտրված 1985մ-ը: Ընկերության կողմից նախատեսվող երկրաբանահետախուզական աշխատանքները կիրականացվեն հորատանցքերի և բացահանքի անցմամբ, հաշվի առնելով մերկացումները, կկատարվեն համապատասխան փաստագրման և նմուշարկման աշխատանքներ:

Հատկացված տարածքի սահմաններում պաշարների եզրագծման համար հետախուզական ցանցի խտությունը՝ A կարգի պաշարների եզրագծման համար ընդունված է 40.0-120.0մ: Ելնելով նշվածից ընտրվել են հորատանցքերի տեղադիրքերը և վերջինների խորությունները:


Տեղամասի 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման նպատակով նախատեսվում է կատարել երկրաբանահանույթային աշխատանքներ 1.6 հա տարածքի վրա: Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի միջոցով՝ 132-96մմ տրամագծով կարծր համաձուլվածքային թագիկներով: Նախատեսվում է հորատել 21.5- 23.5 մետր խորությամբ 4 հորատանցքեր՝ 90.5 մետր ընդհանուր երկարությամբ՝ 85% հորատահանուկի նվազագույն ելքով: Իրականացվելու է 1-ին խմբի 4 հորատանցքերի հորատում /ՈԻԳԲ 1-ՎԱ (ԶԻԼ 131) տիպի ինքնագնաց հաստոցով/, հորատող հաստոցի 4 տեղակայում և տեղահանում:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում են կատարվել 1:100 մասշտաբով: Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը, մերկացումներն ու բացահանքը: Այդ աշխատանքների ծավալները ըստ տեսակների հետևյալն են. հորատահանուկի փաստագրում - 90.5 մ, 2 մերկացումներ - 35.0մ, փորձնական բացահանք - 20մ: Անդեզիտաբազալտները նախատեսվում է ուսումնասիրել որպես երեսապատման նյութ, շինարարական խճի և որպես ավազի արտադրման հումք:

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից, բացահանքից և մերկացումներից: Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է.

- Հորատանցքերի հանուկի նմուշարկում անընդհատ տիրույթներով: Նմուշների սեկցիայի երկարությունն ընդունված է մինչև 5մ, հանուկային նմուշների ընդհանուր քանակը կկազմի 15 նմուշ (71.5մ);
- Մերկացումներից և փորձնական բացահանքից նախատեսվում է վերցնել մենաքարեր՝ թվով երկուական: Մենաքարերի ընդհանուր քանակը կկազմի 6 հատ (20x20x20սմ չափսերի).
- Քիմիական կազմի որոշման նպատակով վերցնել 2 նմուշ, իսկ քարաբանական կազմի ուսումնասիրման նպատակով՝ 2 նմուշ:

Բազալտների քիմիական կազմը կորոշվի ըստ 2 նմուշների անալիզի, իսկ ֆիզիկամեխանիկական հատկանիշները կուսումնասիրվեն 21 նմուշներով (այդ թվում 15



նմուշ հորատահանուկ, 6 նմուշ մենակաքար): Նմուշներից 11-ը կենթարկվեն փորձարկումների լրիվ ծրագրով, իսկ 10-ը կրճատ: Քարաբանական և միներալոգական ուսումնասիրությունները կկատարվեն 2 հղկուկների միջոցով:

Լաբորատոր հետազոտման կենթարկվի մեկ համախառն նմուշ՝ խճի ուսումնասիրման համար: Լաբորատոր ուսումնասիրությունները և նմուշների ֆիզիկամեխանիկական փորձարկումներ նախատեսվում են կատարել համապատասխան մասնագիտացված լաբորատորիայում:

Լեռնային զանգվածից պիտանի բլոկների ելքի տոկոսի որոշման համար նախատեսվում է երևակյան սահմաններում փորձնական բացահանքի անցում՝ $20 \times 7.0 \times 3.0 = 420.0 \text{մ}^3$ ծավալով, որից 82.0մ^3 -ը հողաբուսական շերտն է, 188.0մ^3 -ը հողմնահարված ու ճեղքավորված անդեզիտաբազալտներն են, իսկ 150.0մ^3 -ը՝ թարմ անդեզիտաբազալտներն են: Վերջիններից կկատարվի փորձնական հանույթ պիտանի բլոկների ելքի որոշման համար: Այսպիսով, փորձնական հանույթի ընդհանուր ծավալը կկազմի 150.0մ^3 : Այս աշխատանքները կկատարվեն մեխանիկական հարատասեպային եղանակով, օգտագործելով բուլդոզեր և էքսկավատոր, VIII կարգի ամրության ապարներում:


Ուսումնասիրության աշխատանքները նախատեսում են կատարել նև 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ՝ 1.6 հա մակերեսով տարածքում, բոլոր հետախուզական փորվածքների և երկրաբանական մերկացումների գործիքային տեղադրմամբ՝ տոպո հիմքի վրա:

Աշխատանքների ընթացքում տեխնիկական (14.4տ) և կենցաղային (2.3տ) նպատակներով ջրամատակարարումը կատարվելու է հարակից բնակավայրից բերովի ջրի հաշվին ավտոցիստեռնով՝ բաժանորդ հանդիսացող անձից կամ ընկերությունից: Որոտան գետից տեխնիկական նպատակով ջրառ իրականացնելու դեպքում ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կստանա ջրօգտագործման թույլտվություն: Աշխատանքների իրականացման արդյունքում առաջացող կենցաղային կեղտաջրերը կկուտակվեն նախապես կառուցված, բետոնապատ անթափանց հորի մեջ: Երևակյան տարածքում աշխատանքներն իրականացնող անձնակազմի համար կազմակերպվելու են հանգստի և սննդի ընդունման համար հարմարավետ պայմաններ՝ տեղադրվելու են վազոն-տնակներ, հանդերձանքի տեղավորման համար անհրաժեշտ պահարաններ, լվացարան, արտաքնոց:

Ծրագրավորվող աշխատանքների ընթացքում ժամանակավոր ազդեցություններ կդրսևորվեն մթնոլորտային օդի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա:

Հողային ծածկույթի վրա կարճատև բացասական ազդեցություն կդրսևորվի փորձնական բացահանքի անցման ժամանակ: Քանի որ երևակյան տարածքում մակերևութային ջրային ռեսուրսները և գրունտային ջրերի հորիզոնները բացակայում են, ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները չեն դրսևորվելու: Ընկերության կողմից հայցվող տարածքն, ինչպես նաև հարակից շրջանները չեն առնչվում բնության հատուկ պահպանվող տարածքների կամ բնության հուշարձանների հետ: Դիտարկվող տարածքում սողանքային երևույթներ չեն արձանագրվել:

Հայցվող տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում արտանետումներ կառաջանան հորատման և փորձնական բացահանքի անցման ժամանակ և ճանապարհներին՝ տրանսպորտի տեղաշարժի ժամանակ: Նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ, որոնք թույլ կտան նվազեցնել փորձնական բացահանքի շինարարության և արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները:



Տեխնոլոգիական գործընթացներով պայմանավորված աշխատանքների իրականացման ընթացքում կառաջանա առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա) կապված՝ տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ, որը պետք է վերահսկվի սահմանային թույլատրելի մակարդակի ցուցանիշն ապահովելու համար:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/կանխարգելման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- ուսումնասիրվող տարածքներում նավթամթերքների պահեստավորման, մեքենաների լիցքավորման, յուղերի, քսայուղերի փոխարինման աշխատանքների բացառում,

- կենցաղային աղբի հավաքում հատուկ տարողությունների մեջ, տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր, /Ընկերությունը ընդերքօգտագործման իրավունքը ձեռք բերելուց հետո պայմանագիր կկնքվի համայնքի հետ/,

- արտանետվող վասակար նյութերի չեզոքացնող սարքերի /գոլիչներ/ տեղադրում՝ արտանետումների նվազեցման նպատակով,

- փոշենստեցման նպատակով ճանապարհի, հորատման վայրերի և փորձնական բացահանքի տարածքի ջրցան/անհրաժեշտ տեխնիկական ջուրը պայմանագրային հիմունքներով կգնվի և կտեղափոխվի տեղամասեր մոտակա բնակավայրերից/,

- աղմուկի և թրթռումների մակարդակների վերահսկողություն,

- թռչունների բների հայտնաբերման դեպքում, դրանց տեղափոխում աշխատանքների իրականացման վայրերից դուրս,

- բեռների և աշխատակազմի փոխադրում գոյություն ունեցող ճանապարհներով՝ կենսամիջավայրի խախտումը բացառելու նպատակով,

- մինչև դաշտային աշխատանքների սկիզբ աշխատանքներին մասնակցող անձնակազմի վերապատրաստում /<< բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում/,

- տեղամասերի տարածքներում << բույսերի Կարմիր գրքում գրանցված տվյալ բուսատեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանությանն ուղղված միջոցառումների իրականացում՝ << օրենսդրական պահանջներին համապատասխան,

- խախտված տարածքների լեռնատեխնիկական և կենսաբանական վերականգնում/ռեկուլտիվացիա:

Հետախուզական աշխատանքների ավարտից հետո իրականացվելու է փորձնական բացահանքի տարածքի ռեկուլտիվացիա, ինչի համար կօգտագործվի փորձնական բացահանքի անցման ժամանակ հանված և անմիջապես փորվածքի հարևանությամբ կուտակված հողի վերին շերտը: Նախ կատարվելու է փորձնական բացահանքի տարածքում խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնում/ հարթեցում՝ փուշտա շերտի առաջացումներով, որոնք հետ կլցվեն փորձնական բացահանքի տարածք, որից հետո փուշտա շերտի վրա փռվելու է 0.6մ հզորության հողաբուսական շերտը: Այնուհետև ռեկուլտիվացված տարածքներում կատարվում է հողերի փխրեցում, պարարտացում, ինչին կհաջորդի նաև տարածքին բնորոշ բազմամյա խոտաբույսերի սերմերի ցանքը: Աշխատանքների ավարտից հետո կփխրեցվեն նաև հորատման հաստոցի տեղակայման վայրերի մակերեսները: Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար նախատեսվում է շրջակա միջավայրի պահպանության հրամազլխին հատկացնել 123.0 հազ.<< դրամ:



Ընկերության կողմից հայցվող տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ լցակայան չի կազմակերպվելու և կուտակման և կառավարման ենթակա ընդերքօգտագործման թափոններ չեն առաջանա, քանի որ փորձնական բացահանքի անցման ժամանակ առաջացած 82.0մ³ հողաբուսական շերտը և 188.0մ³ ընդհանուր ծավալով հողմնահարված ու ճեղքավորված անդեզիտաբազալտները /որոնք ոչ վտանգավոր ընդերքօգտագործման թափոններ են/ ամբողջ ծավալով օգտագործվելու են ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակ:

Հորատման աշխատանքների արդյունքում կառաջանան մաշված, որակական հատկությունները կորցրած հորատման թագիկներ: Հայցվող տարածքներում հորատումը և դրա հետ փոխկապակցված բոլոր աշխատանքներն իրականացվելու են մասնագիտացված կազմակերպության կողմից, հետևաբար Ընկերության կողմից հորատման թագիկների թափոնների կառավարում չի նախատեսում:

Մեքենաների լիցքավորման, յուղերի, քսայուղերի փոխարինման աշխատանքները իրականացվելու են Գորայք կամ Սիսիան համայնքներում՝ համապատասխան մասնագիտական ծառայություններ մատուցող ընկերությունների տարածքում՝ բացառելու նպատակով դրանց արտահոսքերը շրջակա տարածքներ:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար կարևորվում է աշխատանքներ իրականացնող անձնակազմի մոտ շարժական կապի միջոցների առկայության ապահովումը, հետախուզական, անվտանգության կանոնների վերաբերյալ անձնակազմի պատրաստվածությունը, ինչպես նաև առաջին բուժօգնության միջոցների առկայությունը:

«ԱՄՈՒՐ ԲԱԶԱԼՏ» ՍՊ ընկերության «Քարաժայռ» երևակման տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում Ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնց իրականացման ծախսերը գնահատվել են 510.0 հազ.ՀՀ դրամ:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Փորձաքննական գործընթացին մասնակցել են՝ Սյունիքի մարզպետարանը, պաշտպանության, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց կարծիքները ևս հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Գորայք համայնքի Սպանդարյան բնակավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները, կարելի է եզրահանգել, որ երկրաբանական ուսումնասիրության ծրագրով նախատեսված աշխատանքների ժամանակ Հայտում նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում և ստորև բերված փորձաքննական պահանջների կատարումն ապահովելու դեպքում շրջակա միջավայրի, մարդու առողջության և հնագիտական տարածքների վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկանխարգելվեն, կամ կնվազեցվեն:

Փորձաքննական պահանջներ



